

նա՛նք նորա յեաւելոյ և ոչ մի կորստական անդունդ չպիտի կարողանայ յափշտակել մեզ իւր ծոցը:

Կ. Կ.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Յուլիսի 22-ին Նորին Կայսերական Մեծութեան Մայր Թագուհի Կայսրուհոյ անուանակոչութիւն տօնի առթիւ Ազգիս Վեհափառ Հայրապետն ուղղեց հետեւեալ շնորհատրութեան հետագիրը՝

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵՏՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅ ՄԱՐԻԱՅ ՅԷԺՌՈՐՈՎՆԱՅ.

Համակեալ ի զգացումն անյեղլի անձնուիրութեան՝ բարդ անձին համարիմ մատուցանել զիմ և զհօտին իմոյ շնորհաւորութիւնս յայս հանդիսաւոր օր Անուանակոչութեան Չերդ Կայսերական Մեծութեան: Վերառաքեմ ջերմագին աղօթս առ Բարեգութն Աստուած ի պարգեւել Չեդ, Ամենաբարեպաշտ Թագուհի, կատարեալ երջանկութիւն և քաջաւորջութիւն ի բազում և ի բազում ամս:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Այս շնորհատրութեան ստացունցաւ Նորին Մեծութիւնից հետեւեալ պատասխանը.

ԷՉՄԻԱՄԻՆ

ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. ՄԿՐՏԻՉ.

Խնդրեմ ի Չերդ Նրանութեան, ընդունել զհաւաստիս անկեղծ երախտագիտութեան իմոյ և յայտնել հօտին Չերդ զշնորհակալիս իմ վասն աղօթիցն, շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց, ընդ որս զգածեալ եմ ի խոր:

ՄԱՐԻԱ.

Նորին Սրբութիւն Աեհափառ Հայրապետը կարեւոր գործերի պատճառաւ չկարողանալով շարունակ Բիւրական ամարանցում մնալ, յունիս 17-ից ի վեր ստիպուած է եղել մի քանի անգամ Մայր Աթոռ իջնել և վերադառնալ:


— Յունիս 25-ին ս. Պատարագից յետոյ Մայր տաճարում կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ ի յիշատակ Մեծազօր Նիկողայ Ա. Կայսեր ծննդեան հարիւրամակի: Պատարագին էր Գեր. Երիստակէս եպիսկոպոս Դաւթեան. իսկ հոգեհանգստից առաջ օրուայ հանդիսի առթիւ խօսեց Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոս: Համառօտակի յիշելով հանգուցեալ Կայսեր, իրրեւ նոր ժամանակի մի ամենաշնանաւոր գահակալի՝ բազմաբովանդակ կենաց գլխաւոր դէպքերը, Սրբազանը կանգ առաւ մասնաւորապէս Նորա, իրրեւ Կովկասի տիրապետողի գործունէութեան վերայ. յառաջ բերաւ մի քանի տեղեկութիւններ Նորա մեր երկրում կատարած ծանապարհորդութիւնից, համեմատեց Կարապետ արքեպիսկոպոսի և Յովհաննէս Կաթողիկոսի հետ ունեցած տեսակցութիւնները, Ապա այս համեմատութեան հետ կապելով նաև այն տպաւորութիւնը, որ ս. Էջմիածնի Սինդոքի և Միաբանութեան անմիսութար վիճակը պէտք է թողնէր իմաստուն Կայսեր վերայ՝ Գեր. Քարոզին ազգու խօսքերով յորդորեց լինել այնպէս քաջարթուն և միաբան ջանկից ս. Էջմիածնի Աեհ. Աթոռակալի, որ եթէ Տեառն յաջողութեամբ Նիկողայ Ա.-ի արժանաւոր ժառանգ և անուանակից մեր այժմեան Օգոստոսփառ Կայսրը նոյնպիսի ծանապարհորդութիւն յանձն առնէ մի օր, ամէնքիս մէջ դէպի Իւր Գահն ունեցած հաւատարիմ զգացմանց հետ մէկ տեղ կատարեալ անձնուիրութիւն գտնէ դէպի մայրենի ս. Եկեղեցին և հայրենական ս. աւանդները, պատկառանք ազդող միաբանութիւն և գործունէութիւն. — Հոգեհանգստից յետոյ մաղթանք կատարուեցաւ ներկայ Կայսեր կենաց համար:

— Յուլիս 2-ին գիշերը Մայր Աթոռ ժամանեց Թագադրութեան հանդիսի համար իրրեւ Կաթողիկոսական պատգամաւոր Մոսկուա և Ս. Պետերբուրգ գնացած Սինդոքի անդամ Գեր. Երեմիա արքեպիսկոպոսը, ուղեկցութեամբ Երեւանի թեմ. Տեսուչ Արժ. Մեսրոպ վարդապետի:

— Աերջին երկու շաբաթուայ ընթացքում Մայր Աթոռը հիւրընկալել է Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Յարութիւնեանին, որ Սեանից գալով շուտով Տաթևի վանքը պիտ ուղևորուի իրրեւ միաբան. Արժ. Յովհաննէս վարդապետ Բազունուն, որ հոգեւոր հովիւ էր Պարսկաստանի Ղարաբաղ գաւա-

ռում, և Արթ. Արսէն վարդ. Վեհաւան, որ առաջնորդական փոխանորդ էր Պարսկաստանի Սալմաստ վիճակի:

— Ստացուեցաւ նոր նախիջանցի բարեպաշտ Գասպար աղա Կարապետօղլեանի ընծայած արծաթի մեծագին ս. Միւռնի կաթսան, որ մի քանի օր զըրուած էր ի զոյց Մայր տաճարում և այժմ պահուում է թանգարանում: Նորին Վեհափառութիւնը իւր սրբատառ Կոնդակով օրհնեց այդ գեղեցիկ բարեգործութիւնը:



Գ. ՃԵՄԱՐԱՆ.

Ճեմարանի տեսուչ Մեծ. պ. Կոստանեան ապաքինած լինելով Վիեննայում, մտադիր է մի քանի շարաթ անցնել Արաթումանում կազդուրուելու համար և ապա շտապել օգոստոսի վերջերին իւր պաշտօնավայրը, որպէս զի անձամբ վերահսկէ ընդունելութեանց քննութիւններին:— Յանկալի է, որ Ճեմարանի բարեկամները, մանաւանդ թէ նորա խնամքը վայելած անձինք, աշխատեն ամեն կերպ առաջնակարգ ընդունակութեան տէր, բարեբարոյ, ուշիմ և ձայնեղ աշակերտներ ուղարկելու առաջիկայ ուսումնական տարուայ համար: արդէն մի որեւէ ուսումնավայրում ապաստանարան ունեցողներն, ի նկատի առնելով այն մեծ կարիքը, որ բազմաթիւ պատանիների կտտիպէ Ճեմարան գիմելու, չշարժին իրենց տեղերից: Տրատարակուած կանոններին անհամապատասխան, հասկն անցած, ընդունակութիւնից զուրկ և անպատրաստ պատանիներ զուր տեղը ճանապարհի նեղութիւնները յանձն չառնեն: Ճեմարանի վարչութիւնը ստիպուած պէտք է լինի խիստ ընտրութիւն անել:

— Այս ամառուայ արձակուրդին Ճեմարանի գրեթէ բոլոր սաներն ազատութիւն ստացան իրենց ծնողաց կամ բարեկամների մօտ գնալու: այնպէս որ միայն շուրջ 30 հոգի մնացին հեռաբակներին: Սոցանից 4 հոգի ժամանակաւորապէս Խճկօնից վանքն (Բէշքիլիսէ) ուղարկուեցան: 3 հոգի Սեան իսկ 5 հոգի տկարներ Բիւրական ամարանցում են այժմ կազդուրուելու համար:— Ամսոյս 23-ին Տեսչի օգն. Կարապետ վարդապետի առաջնորդութեամբ այստեղ մնացածներն եռօրեայ ճանապարհորդութիւն արին, կէս ոտքով կէս կառքով, դէպի Աշտարակ ու Բիւ-

րական, այցելելով շրջակայ նշանաւոր վանքերը՝ Մողնի, Յովհաննավանք, Սաղմոսավանք, և Լազարավանք ու Փարսի գիւղերը:

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅՑ.

Մայր Աթոռիս տպարանից լոյս տեսան Ա. Հինգ արտատպութիւնների «Արարատից»:

1. Համամ Արեւելցի, Թ. զարու արքայազն բանաստեղծ. 2. Յոհան Օձնեցու ճառն ընդդէմ երկաթնակաց. 3. Պատմութիւն Սասանեան տէրութեան. 4. Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթն առ Աբաս Աղուանից կաթողիկոս. 5. Ա. և Բ. Մնացորդաց զբերի նորագիւտ հայ թարգմանութիւնը:

Բ. Առակք. Բոխիովի, թարգմ. Գարրիէլ արքեպիսկ. Այվազեանի. հեղինակի և թարգմանչի կենսագրութիւններով. Բ. տպագրութիւն:

Մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն


1. Առաքել Դաւրիժեցի. Գ. տպագրութիւն.

2. Պարզ Բարոյներ Գ. տեսարակ. Էմ. քահ. Նազարեանցի.

3. Կրօնական — Բարդուղիմէոս Խորհրդածութիւնք. Ա. հատ. թարգմ. Գ. եպ. Աղափիրեանցի.

4. Գութան. աշխատ. Ս. Հայկունեայ.

5. Սրբազան պատմութիւն ընդարձակ. Ամիրոսիոս Գալֆայեանի:



ՏԱՃԿԱՀԱՅՔ

Վանում եւ շրջակայքում տեղի ունեցած սարսափելի կոտորածների մասին մինչեւ այժմ ճշգրիտ պաշտօնական տեղեկութիւններ չստացուեցան: Ոստի զանց առնելով իւրոյ հասած զանազան զարհուրեցուցիչ պատմութիւններ՝ մէջ կըերենք այստեղ միայն հետեւեալ աղեխարշ նկարագիրը մի պաշտօնական զրուիւնից:

Աշուն, ձմեռ, նոյնպէս և պայծառ գեղեցիկ գարուն՝ մառախլապատ սև սև ամպեր քօղարկելով Վասպուրականի զուարթ հորիզոնը, կայծակներով ահաբեկելով զայն, վերջապէս յունիս 3-ին սոսկալի պայթիւնով սկսեց երկրային հրդ կարկուտներ սրոյ խուլ մունջ հարուածներով կործանել չքնադագեղ Վան իւր բոլոր գաւառներով. ո՛հ, մանաւանդ երբ

վանցին անձնապաշտպանութեան աստուածադիր օրինօք կամէր ապրիլ:

Աւաղ, դժուար է 2 ե զ գուժել հայրենեաց անխելի բովըլ բայց թէ մենք լուեք ալ, կապուտակ անրի՞նք երկնից երեսը շօշափելի խաւարաւ ծածկող թանձր մուխը՝ բարձրացած քստմենելի վայնասունների, խուժանի գազանային աղաղակներու, վիրաւորելոց մանչիւններու, թնդանօթներու գոռումներու և սարսափահարներու ճիչերու հետ, արդէն եկած են վրդովել 2 ե ը զգացումը և բնադրել: Ախ, երբ ամէն աչք խաւար և ամէն սիրտ մեռած է, ո՞վ պիտի կարենայ գրիչ շարժելով նկարագրել դժոխային անցքերը, որ անցին, եթէ գիտցած լինէինք նման պատմութիւն մ'անցելոյն մէջ, գոհ կը լինէինք կրկնելով զայն, բայց երբ բոլոր դարուց դէպքերու գումարը չբաւականանար այս միայն մէկ աղէտը ներկայացնել... Հապա... այս լայնատարած դաշտի երկնային պատկերը, այս դրախտը՝ որ մէկ շարժուման մէջ հազարամեայ աւերակաց հանգերձք հագաւ:

Ո՛հ, հազար ո՛հ, գիշակեր անգղեր ու արծիւներ երամովին, գազաններ վճճմակով դիմեցին լափել դաշտերու, լեռներու և ձորերու ու գիւղերու մէջ փռուած անմեղ գիւղներ, իցի՛ն թէ բոլոր աշխարհիս բուերն ալ հրաշալի հրամանաւ մը խրմբուէին տիրելու աւերակաց և վայելելու այս անօրինակ աւերը, 2 տեսնողը՝ չէ՛, չէ՛, բնաւ չկրնար հաւատալ թէ մարդկային կամ նոյն իսկ սաղայելեան դասեր կրնան այսպէս մոխրակոյտ մը դարձնել դարաւոր դրախտանման վայրեր, գրչի գործ չէ գրել, նոյն իսկ տեսնող աչքն ալ չկրնար հաւատալ, թէ իր տեսածն իրականութիւն է: Եթէ հորիզոն ունենար լուսանկարի քարտի յատկութիւն և կամ հայելի մը դառնար, որ եթերային բարձրութեան մէջ ցոլացնէր այս զարհուրելի պատկերը, յայնժամ միայն «եթէ կրնայինք աչքերնուս հաւատալ» պիտի կրնայինք գաղափար մը կազմել մարդկային գաղաւթութեան դիւական մոլեռանդութեան վրայ, ընդ որ երկինքն իսկ սոսկալով հազիւ կրնայ նայիլ՝ զը զալ ու զի գործս ձեռաց իւրոց...:

... Գնանք նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ դուռը, ակնարկ մը դարձնելով Մեծ քէն-տիրչի ցամքած աղբիւրի մօտէն այս երկու փողոցներու մէջ մինչև Այօյի դար հոծ գիւղուած մերկ, օրերով անսուղ պառկած՝ դեղնած թալկացած որբեր, այրիներ, որգեկորոյս ծնողքներ, խելառ ու մոլար, երեքացող, չոր ու ցամաք աչօք ողբացող գիւղացի և քաղաքացի Հայ ժողովրդեան սուգն ու աշմուկը նկատելով և պահ մը դիտելով հաց ու

ճաշ բաշխող երեք փուռերու հրապարակներ խրանուած աղեխարշ տեսարանն՝ մտնեք Ամերիկեան հիւանդանոցներ, այցելելու վայրագ բարբարոսութեան քստմենելի նմոյշներ, վիրաւորեալ մանկիկներ, ծերեր, ու երիտասարդներ, այր և կին, անօթութեան և անպատսպարութեան դառն վիճակաւ զանազան ծարակող հիւանդութեամբ տանջուող բաղմութիւնն: Ո՞վ կարէ ժուժել այս տեսարանին և լսել նոցա սրտաշարժ հեծեծանքն ու հառաչը:

Փութանք Ս. մեծաստաններ. ո՛ւր են այն վարդապետք և մշակաց խումբ, ո՛ւր այն Ս. սպասք և անթիւ հարստութիւն, ո՛հ, դեռ կը մխան...:

Տեսնենք գիւղերն ալ. ո՛ւր են այն աշխատասէր մշակներ և նոցա օգնական հիւրասէր մամիկներ ու պապիկներ, դաշտի արդ ու զարդ հարս ու աղջըկուէք, ո՛ւր են խաշանց հօտեր ու հովիւներ և դուռաց նախրներ, ո՛ւր նոցա խաղաղ ընտանեկան յարկն և պարզ խրճիթներ, ո՛ւր գոնէ նոցա երկրագործական գործիքներ, և ո՛հ, ո՛ւր նոցա նահապետական հարստութիւնն՝ զոր դարերէ ի վեր հարստահարող ձեռք դեռ չէր կրցած իսպառ աղօտացնել:

2՝ զարհուրիք, ո՞վ են այս ուռած հարիւրաւոր կարմիր դիակներ իւրաքանչիւր գիւղ, եղ՞ուկ աշացըս, դարերով քրտնաթոր տքնութեամբ Ղուրանի ժողովրդին հաց մատակարարող հաւատարիմ հպատակ անդորրասէր Հայ մշակներ են. վաստակարեկ յոգնած՝ յաւիտեանս հանգստանալու կը քնանան:

Ի՞նչ անբաղդութիւն, ողջ ողջ թաղուածներէն ի զատ մեռածներ թաղուելու բարիքն ալ չեն վայելեր, Տիրասէր շուներն ալ օրինակ առնելով տիրող ապերախտութիւնից՝ կը կրծեն իրենց տէրերու մարմիններ:

Եթէ կարելի է, աներևութաբար անցնինք մէկ մը քիւրտ գիւղեր ալ... Ի՞նչ բազմամարդ են, մի՞ զարմանայք, անոնց մեծ մասը Հայ գեղանի երիտասարդներ, օրիորդներ ու հարսներ են, որ ի սէր իրենց ծաղիկ կենաց, կամաւ և կամ բարբարոսի կերքը յագեցնելու՝ բռնի տարուած են նոր կրօնի հետ նոր... կենանք մը սկսելու. շատ քահանայք ալ կան սոցա մէջ. բոլոր ասոնք իրենց դիմաց տխրութենէն կը ճանչցուն խաժամուժ գիշակեր գաղաններից:

Ո՞վ են դաշտերու մէջ այս բաղմութիւն՝ որք յափշտակողներու քան երկրագործի կը նմանին, ախ, սոքա այն բարբարոսներ են, որք Հայ գիւղացու արիւնէն և ինչքէն չյագեցած՝ նոցա արգար քրքրանց անտէր արդիւնքներ, խոտեր ու տհաս ցորեան-

ներ անխնայ կը հնձնէն, կը տանեն բնաւ ին կտրելու մնացեալ որոց և այրեաց վերջին և միակ ապաւենն:

Հարեանցի աննարկ մը նետելով այս բուռ ու տխուր բլուրներու և ծաղիւռէտ լեռանց վրայէն, ամեն արտի մէջ մեզ պատահած ցանուցիր Նշարներու վրայ հոգեհանգիստ մը կարգաւորի դառնանք լալու 15—20 հազար նահատակաց ու նոցա կրկինն աւելի կրօնափոխելոց վրայ միութարեւելու սգաւորներ ու մանաւանդ բռնարարուելով գաղանական կիրքերէ խածատուած մատղաշ հարս ու աղջկանց բազմութիւնն, որոց զիմաց վրայ կը փայլի գեռ խորհմեալ ամօթախառն պարկեշտութիւն մը և արդար զայրոյթ մը իրենց պատինն ու կուսութիւնը յափշտակող ոճրագործաց դէմ՝ նոր և անմիջական դարման մը խորհելու այս սովատանջ մնացելոց:

Հարցնեմք. այս իրաւամբ յուսահատ և իր վերքն միայն ինքն հասկցող ժողովուրդ ի՞նչ կը խորհի, ի՞նչ է իր յոյսը. նա գիտէ, որ այլ ևս մարդասիրական նպատակներ չեն կարող բուժել իր անդարմանելի վէրքը. նա գիտէ փորձառութեամբ, որ հրատարակեալ և խոստացեալ կեղծ ապահովութիւններ չեն զսպեր կատարած իսլամ ժողովուրդը և ուստի ինքն չէ կարող բնաւ ալ տէր լինել իր հոգեպահիկին, նորա յոյսը միայն զինքն հարուածող արիւնոտ Ղուրանի շուքն է, զոր պաշտելու միակ պայմանաւ մերկ խալաթ մերկ կրնայ հայն դառնալ իւր քարուքանդ ամայի տունն...

ՎԵՆԵՐԱԳՐԵՐ

1895 աղէտալի տարին անցաւ քայց այդ աղէտների սոսկալի հետեանքները դեռ շարունակուում են: Այդ սեւ տարին պէտք է գոնէ մի սեւ յիշատակարան եւս ունենայ. ահա այդ սեւ յիշատակարանի նիւթերն են, որ „Արարատը“ պարտատը է հրատարակել իբրեւ բերան Հայաստանեայց եկեղեցու որպէս զի գոնէ պատմութեան մէջ անմահանան այն նահատակները, որ իրենց արիւնը չէր նայեցին Զրիստոսի անուան համար: Յիշատակն աղղարոց օրհնութեամբ եղիցի:

Գ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՂԸՆԻ ԳԱՆՈՒՄԵՆ

Աղընի գաւառակը կը վերաբերի Անայ կապարութեան շրջանակին, իսկ աղգ. վիճակաւ

Արարկերի առաջնորդարանի Այս գաւառակին մէջ կը գտնուին 13 հայ գիւղեր որոնք են.

	բնակիչ	Հայք.	Տուն.
Աղըն կամ Ը. Հ. Աղաւեր.	300	" "	80
Վաղշէն	250	" "	65
Վանք	45	" "	40
Զուշնայ	70	" "	70
Կոան	35	" "	28
Հացկունէ	50	" "	20
Էնէկիք	55	" "	50
Խոռոջ	52	" "	20
Մաշկերտ	420	" "	440
Սաղմուլայ	50	" "	50
Ընկուի	200	" "	120
Ին, կամ Ը. Հ. Ժագ	100	" "	400
Ջասկվար	—	" "	40
Հայ տուն	—		773

Արարկերի առաջնորդարանի կը վերաբերին նաև Հէփիկ և Եմպարկայ գիւղերն, որք նոյնպէս Արարկերի կառավարութեան շրջանակին կը պատկանին: Այս գիւղերէն իւրաքանչիւրին վրայ պիտի խօսենք:

Աղընայ գաւառակին մէջ իրեն բարբարոսութեամբ հանրածանօթ թուրք գիւղերէն փուլ կուշուած գիւղերի կատաղի բնակիչք՝ առաջնորդ ունենալով իրենց Էմին Էֆեն, Իպրահիմ Զաւուշն և Համէր Էֆեն, զինեալ կուգան կրմիանան արքէն Աղըն (կեղրոն այն գաւառակին) հասած Սարաճուգի հփ. Մէհմէտ արիւնարբու և գաղանարարոյ անօրէնին, և Մատիւրիէցի Իսմայէլ և Ապտիւլհասան անուն շարագործներուն, որք նոյնպէս իրենց մարդերով զինեալ և պատրաստ կը կապուին հրոստիւմը մը և կը սկսեն իրենց գաղանային գործն ի գլուխ հանել, որ իրենց նուիրական բաժին կը համարէին և որով կը կարծէին պաշտօն մատուցանել իրենց գնտապետին և վեհապետին:

Եսոնք են ահա, որ սուր ի մի ձեռքն և հօր ի միւսում յարձակեցան նախ Աղընի վրայ, խորտակեցին բոլոր հայոց տան դռներն, աւարի տունն բոլոր կարասիք, ուսուլիք և հանգերձեղէնք, սպաննեցին ի փախուստ եղող ահարեկ անմեղներին, կրակի տունն մասնաւորաց գեղեցեկաշէն տուններն և յետոյ անհոգիւ, անտէր, ցանուցիր, այգիներու մացաններու տակ սպահուրտող կամ պատերու և ցանկապատերու ետև թաղող կիներու, հարսներու և մանուկներու վրայ յարձակեցան կոտորեցին, պղծեցին, առեանդեցին և վերջապէս բռնի թրքացուցին զամենն, մեծէն մինչև փոքրը թլփատեցին՝ եկեղեցի, ժողովարան քանդեցին և սրբապղծեցին: Աստիկանութիւնն և օստիկան զինուորք ոչ թէ միայն ճ և է պաշտպանութիւն ընելու փոքրիկ ճիգ մը

չբրին, այլ և գործակից դանուեցան այս չարագործաց, Խումբը ստուգարացաւ հոս այս առաջին յաղթութեամբ, յորում ութսուն տուն խեղճ հայերն բնաջինջ կորսնցուցին և սրէ անցուցին աւելի քան 30 հոգի, նոյնչափ ալ վիրաւոր՝ մէկ չորրորդն բուժելի, Աղին չրջակայ թուրք գիւղերէն հոս հասան բազմութեամբ, բայց ոչ թէ կացինով, դանակով զինուած, այլ մարթինի հրաղէնով և վէշէւթով, ասոնք պահեստի զինուորներն են թուրք և քիւրդ հագուստով հրահանգ առած են միանալ հփ. Մէհմէտի հրոսախմբին, և ահա 1500—2000 կատաղի խումբը կանցնի դէպի առաջ, Վաղշէն, Վաղշէնցի Խամայիլ էֆ. իր մարդերով միացաւ և սկսան աւարի տալ ամէն ինչ, կահկարասիք, ուտելիք մինչև շնչին աւելն ու ունելին, խորտակեցին հայոց տան դռներն և քանդեցին առաստաղներն, հիմերն ալ բացին շատ մը տուններ, ուր կը կարծէին գանձեր թաղուած, Եկեղեցին քանդեցին բոլորովին և դպրոցն այրեցին, Ահաբեկ ժողովուրդն ցրուած այգիներու որթատընկոց մէջ և բլրակներու ձորամէջերն սարսափահար եղած՝ կսպանէր ձգնաժամին անցնելուն:

Խամայիլ էֆ. ձի հեծած այս ու այն կողմ կարշաւէ և ժողովուրդն կը հրաւիրէ իրեն տուներըն սպառնալով որ եթէ չգան՝ կրակի պիտի տան բնակարանք, իսկ եթէ հնազանդեն ու գան՝ խաղաղութեան միջնորդն ինք պիտի ըլլայ և անմիաս պահպանէ զամենք, Միամիտ ժողովուրդն, ոչ թէ բոլորովին համոզուելով Խամայիլ էֆէնդիին, այլ չարերուն բարկութեան տեղի չը տալու համար, յաւամայս կը համակերպի և յիշեալ կատաղի անօրէնին առաջնորդութեամբ կը հաւաքուին մզկիթին հրապարակը, հոս խմբապետներն հաւաքուած կը սպասեն և կառավարկեն ժողովրդին ընդունել իւլամութիւնը՝ հակառակ պարագային սպանելու ըստ պառնալիք կրնեն. անմիջապէս բոլոր լազմութիւնը մզկիթը կը լեցնեն կանայք և մանկութիւն, հարսուներ և պառաններն, Իսկ էրիկ մարդիկ, թուով 37, հրապարակին վերայ սէլաւթէթ կուտան և մահմեդականութիւնը կընդունին, Թշուառները կը կարծեն, թէ այգու կարող պիտի ըլլան իրենց ողորմելի ընտանեաց և անտերունջ մանկանց ողբն ու կոծն դադրեցնելու, Բայց չարեաց և անօրինութեանց աւելին դեռ նոր կսկսի, Յիշեալ հփ. Մէհմէտ և Իսմայիլ էֆ. երկու հարիւր աւելի զինեալ մարդերով ձամբայ կեննեն դէպի Աղբն, միասին առնելով նաև այն (37) կրօնափոխը՝ որպէս թէ հոն պաշտօնապէս թշխատուելու կը տանին, Այս պատրուակին տակ հաղիւ գիւղէն դուրս կեննեն ընդարձակ ձամբուն մէջ, ձիջդ դէմ առ դէմ յուսակաւոր աղաղակող կանանց, մանկանց, հարսանց և պառանանց՝ հրացանի

կը բռնեն, և իւրաքանչիւրին տասնեակներով գնդակի հարուածներ տալէ յետոյ, դանակներով կը յոշտեն արեան մէջ թաւալող դիակներն:

Ապա Բուշայ գիւղի վրայ յարձակեցաւ հրոսախումբն և անմիջապէս բերդ մը պաշարելու պէս պաշարեց գիւղն և կրակ տուաւ առաջին տուն, որմէ բռնկեցան նաև շուրջերն. քանդեց եկեղեցին, կողոպտեց ամէն ինչ և սպաննեց 6 մարդ գիւղին մէջ, իսկ քահանան կտտամահ ըրաւ գիւղէն դուրս ձորակի մը մէջ, ուր ապաստանած էր խեղճն փրկելու զանձն անգութներու ձիրանէն:

Վանք, Պաանի, Հացկընէ, Խոռոջ և Եհնեկիք գիւղերու վրայ կը յարձակի հրոսախումբն և աւարի կուտայ բոլոր Հայոց տուններն, այս աւարառութիւնը իրարու ետեւէ ութը օր կը տեւ. ապա վերջին անգամն ըլլալով՝ բռնի կը թշխատեն բոլոր Ժողովուրդն և կիսամացնեն, Անմիջապէս կսպանեն զանոնք, որոնք հաստատուն կամք կը յայտնեն չը թողուլ քրիստոնէութիւնը. ինչպէս պ. Մարտիրոս Թուլումպաճեան, որ չընդունեց մահմեդականութիւնը՝ հարիւրներով յարձակեցան վրան և ամեն կողմէ մինչ կը վիրաւորէին, սա բազուկները վերցուցած կաղօթէր, վերջապէս կացիններու հարուածներով ջախջախեցին բազուկներն և մարմինը պատառ պատառ յօշոտելով շուներու կերակուր ըրին, Եհնեկիք մահմեդականութիւնը բռնի կերպով ընդունած են, և թուրք հոգաներ, ռամիկ և անոպայ կատաղածներ կը գործեն անուր չարիք ընդդէմ քրիստոնէութեան, կը թելադրեն շրջակայ գիւղերը ըրնակող թուրք երիտասարդներն դալ և կնութեան առնել հարսներ և մանկամարդ կիներ, որոց էրիկներն յօտարութեան կը գտնուին ի Պոլիս և յայլուր, կը վճռեն այս չարանեղ վատթարներն, թէ «Թրքացեալ կանայք չէրով ալ հայ էրիկ չեն կըրնար ունենալ, անոնցմէ ելած են և իսլամի մը կնիկ պէտք է ըլլան»: Այս չարիքէն ազատելու համար մի քանիներ իրենց ընտանիք կեդրոն (ի Խարբերդ) փոխադրել տալու ամէն միջոց ձեռք առած են, իսկ մնացեալք՝ թշուառ, աղքատիկ, խեղճ տառապեալներն ի՞նչ պիտի ըլլան, արգէն սովալլուկ, սառի սառնամանիքի և սարսուռի տակ, այս չարիքն ալ աւելի անտանելի՝ մահ աւելի կընտրեն քան այս կեանք, եթէ ինքնասպանութեան սոսկումը իրենց խղճին վրայ չը ծանրանար և միւս կողմէն ազատումի յոյսը չը գար մերթ ընդ մերթ «համբերութիւն» փափսալ անոնց ականջին:

Անցնենք Մաշկերտ, նոյն հրոսախումբն է ամեն տեղ և նոյն հրոսապետներն, Հփ. Մէհմէտ անմիջապէս պաշարել կուտայ և չորս կողմէն կը

բռնկցնեն գիւղը:—Աղայինց, Ճանճիկեանց, Աւազեանց խոշոր ապարանքներն և 20-ի չափ տուներ մէկէն կը բռնկին, բողբու և ծուխերու ալիքներն երկնքի ամպերն կը հասնին՝ բնակիչք մեծաւ մասամբ կին և մանուկ, ծեր և պառաւ արդէն դուռ, երգիք բաց թողլով փախած են: Երիտասարդ և երիկ մարդիկ պանդուխտ են՝ աշխարհի որ կողմն որ կուգես կրնաս գտնել Մաշկերտցի մը, Ամերիկայի մէջ նոյն իսկ ամենէն մեծ ամպիօնին վրայ պիտի տեսնէք Մր. Մանկասար Մանկասարեան ամենէն սքանչելի և ճարտասան քարոզիչ, որ հազարաւոր եանդիներու հիացումը գրաւած է, այս և ասոր նման նշանաւոր անձերու բնագիւղն իւր աւերումներով իւր ծնած զաւակներուն պէս մեծ է:

Չորս հինգ օր իրարու ետև կարշաւեն խումբ խումբ հրոսակներն և աւարի կուտան կրակէն մնացորդ ինչքերն, եկեղեցին կը կողոպտեն և տաճարներն ջարդ ու փշուր կընեն, ժողովարանն կը քանդեն և կը սրբապղծեն, ժողովուրդ, քահանայ բռնի կը թլփատեն: Խեղճ քահանան Արժ. Տ. Գրիգորիս ուսեալ և կըթեալ անձնաւորութիւնն՝ այժմ յիմարի մը ամէն արտայայտութիւնն կը ցուցնէ իր տըխուր դիմաց վրայ. յաճախ կը տեսնենք ղիքն իր արեացաւեր տան մոխիրներուն վրայ, ուր կը նստի ապաշխարութեան աղօթքն ընելով:

Մաշկերտէն 10 վայրկեան է Սաղկայ, ուր նոյնպէս և նոյնքան անգամ աւարառութիւններ կընեն միգրիդիկի յաջորդող հրոսախումբներն, կրակի կուտան մի քանի տուններ՝ կը սրբապղծեն եկեղեցին, ժողովուրդն այր և կին, ծեր և տղայ մերկ և բոկոտ կը հասնին մերձակայ գիւղն Անճրգի, ուր աւելի մեծ դժբաղդութեան կը հասնին:

Անճրգի ալ բոլորովին կողոպտուած նոյն աւերիչ և քանդիչ հրոսախումբն անձար և անօգնական. վերջապէս քահանայք և ժողովուրդք առ հասարակ կը ծռեն բռնութեան և բարբարոսութեան սուրին առջև. անգութն հճի. Մէհէմետ և իր հրոսապետակիցք «թլփատութիւն, խալամութիւն» կը գոչեն, ապա թէ ոչ սուր, Չորս կողմէն քիւրդ ըսուած թիւրքերն և պահեստի զօրքերն գնդակներ կը տեղացնեն գիւղին վրայ՝ բնակիչք և դուրսէն ապաստանողք ահ ու դողի մէջ կստիպուին թլփատութեան բռնութեան համակերպիլ. բարբարոսք կը քանդեն եկեղեցին, կը կողոպտեն անոր մեծագոյն գոյքերն և սրբազան անօթներն, զանգակը կտոր կտոր կընեն և աւերակներու կոյտ մը միայն կը թողուն: Այսպէս ահա ամենէն կարեւոր գիւղն ալ իր բոլոր հարստութիւնէն կը մերկանայ ինչպէս նաև իր պաշտելի կրօնէն. «Ամէն ինչ տուինք, մերկ և անօթի, ան-

սուաղ ենք. ասոնք տանելի են, անտանելին՝ մեր կրօնի աղատութիւնը կորսնցուցինք...» կը գրէ շնորհքով գլուխ մը կնդրոնին (Խարբերդ) առաջնորդարան, և օգնութիւն կը խնդրէ:

Երթանք Ծագը, գտնելու համար ծայրն այս վիճակին, և վերջ ու վախճան Արարկերու թեմին աւերումներուն, Բարբարոսք հոս ալ նոյններն են: 2000 է աւելի բազմութեամբ կարշաւեն այս գիւղին վրայ՝ անոր հիւսիսային կողմի բլրակներուն գագաթներէն, մարախներու պէս կը սուրան. գիւղէն կը փոխանակուին անոնց հրացանի գնդակներուն, Գաջ մը միայն մէկ հրացանովն ահագին բազմութեան աջին կուտար գնդակը՝ բարբարոսք դէպի ձախն կը նահանջէին, իսկ երբ ձախն կուղղէր գնտակը՝ դէպի աջ կը նահանջէին. այսպէս մէկ հրացանին բերնով ժամերով կը փախցնէր թուրք — քուրդերն և ի փախուստ պիտի մղէր անտարակոյս, եթէ շրջակայ թուրք գիւղերէն ծանօթ գէմքեր իր քով իր գիւղը չը տեսնէր, Այս թուրք գէմքերուն մէջն է ճուճեկենցի Օսման աղա անուն վատ գաղան, որ կատաղութեամբ կը լեցուի, երբ կը տեսնէ Ծագցիներու դիմադրութիւնն և կսկսի իր ձեռքի գէկքերն արձակել և իրեններուն ալ հրաման ընել զարնելու, Բարբարոսքար գնտակներն կը վրիպին նպատակէն, և սակայն մինչ այս մինչ այն, ահա արշաւող հրոսախումբն կը լեցուի գիւղն, Բուլոր բնակիչք կը լեցուին շրջակայ պարտեղներուն և այգիներուն մացառներուն տակ և քարերու ու ձորերու խորերն կապաստանին, Ամէն ինչ կը կողոպտեն, կը կտորեն, կը ջարդեն, կը քանդեն, եկեղեցին կը կողոպտեն, տաճարները կը փշուրն մինչև յատակի սալերն, զանգակատունը կը փլցնեն, զանգակը կտոր կտոր կը մանրեն, ստորին կողմը թաղին հրդեհ կուտան և ութ տուն այրեցաւեր մոխիր կը դարձնեն, Մի անգամով սակայն չուարտիր, մինչև եօթներորդ անգամ, օր ընդ մէջ, կը յարձակին աւաղակախումբներն և ամէն բան լմացնելէ վերջ՝ նիւթականին փոխարէն բարոյականին կսկսեն յարձակել և կը պահանջեն բռնի թլփատել քահանայք և ժողովուրդք, սպառնալով, որ եթէ չընդունեն՝ բոլորն ալ, մի տարեկան մանուկ իսկ չը մնալու պայմանաւ, պիտի սուրի բերան տան. իսկ կանայք, կուսանք, հարսուք, մանկամարդք գերի վարելէ և այնպէս խալամացնելէ զատ՝ գիւղն ալ բոլորովին մոխիր դարձնելու պատրաստ են բարձրագոյն հրամանաւ, Խեղճ ժողովուրդք և քահանայք պաշտպանելու համար հայ կուսանաց, կանանց և հարսանց պատիւն և մի միայն այդ պատուոյն և անոնց գերութենէն աղատութեան համար կընդունին

բանութեան և բարարոտութեան կրօնն: Թուրք խոճաներ այժմ՝ կը տարածեն մահմեդականութիւնը՝ հոս ալ անասնելի բանութեան ներքեւ անարգելով քրիստոնէութիւնը:

Խօսելով սոյն վիճակին ներկայ կացութեան վրայ՝ բնաւ փոփոխութիւն մը չէ կրած այն կրօնական ազատութեան տեսակէտով, միշտ նոյն բանութիւնով յառաջ կը մղուին և կը ճնշեն թշուառ խեղճ ժողովուրդը, Չեր Բարձր Սրբազնութեան ջանից հակառակ՝ վիլայէթներու քիմին տակ իսկ կրօնական ազատութիւնը չ'յարգուիր. ո՛ր կմնայ կեդրոնէ հեռու գաւառներու, ի միջի այլոց Աղլընի նման բարարոտ գաւառակի մը համար, Անհնարին է գրեթէ 13 գիւղի այս հայ ժողովրդին վերստանալ իրենց կրօնի ազատութիւնը, քանի որ սպառնալիքներն ու սուրն անոնց գլխուն վերեւ է և տպագայն մութ, մշուշապատ և քանի որ առաջնորդարանն (Արաբկիր) լքեալ և թշուառ կացութեան ենթարկուած է ու ձայնը չը լսուի Աֆնայ կառավարութեան առջև:

«Ճգնաժամը տեւական չէ», այո՛, սակայն այս անտանելի կացութիւնը կը տեւէ ահա, որ աւելի քան չորս ամիս եղաւ, և քանի ժամանակն անցնի՝ այնքան կը գծուարանայ այս ներգութեան գարմանն:

Կէփիկ 80 տուն զուտ հայ բնակիչ ունի՝ Արաբկերէն մէկ ժամ հեռաւորութեամբ դէպի հիւսիս արեւմուտք. աշխատասէր երկրագործներ, որոց աշխատութեամբ կը լեցուէր Արաբկերի շուկան ամէն տեսակ բանջարեղէններով, Բիւրդ հրոսակապետ Պաթալ աղա իր թուրք և քիւրդ զինեալներով կարշաւէ այս գիւղին վրայ և աւարի կուտայ ամէն ինչ, տուններն կայրէ և բոլորովին մոխրի կը վերածէ. 18 տուն միայն ազատած է հրդեհին լափիչ բոցերէն: Միայրակ և խեղճուկ տուներ, ժողովուրդն բոլորովին յուսահատ կառավարութեան օգնութենէն՝ կը քաշուի գետնեղբքն, պարտեզներու և այգիներու մէջ թփերու տակ ապաստանելով, Այսպէս օրերով մերկ, բոկոտն, անսուաղ գետին եզերքն բուսած ջրխօտերով կերակրուելէ ետքը վերջապէս Պաթալ աղայի անօրէն ճիրաններուն զոհ կերթայ. — Բազաք (Արաբկեր) ապաստանելու համար լրարեր հայ կանանց օձիքը ձեռք կը ձգեն և խարդախութեամբ կրմնաւան ժողովրդին եղած վայրերն, Ժուրը կը հաղորդեն թուրք գիւղացիք, և քիւրդերը կը հասնեն թշուառներուն վրայ, կարկտի պէս գնդակ կը տեղացնեն թշնամիք, փախուստ կու-

տան շատեր և կապաստանեն քարանձաւներն՝ ապրեցրնելով զիրենք և ընտանիքնին: Քանի մ' օր վերջ լուր կը տրուի Աղլընի գաւառակին մէջ գտնուող Աէյեարի գնդին, որ առաջնորդութեամբ Ճուճուկենցիներու Կէփիկ կը հասնի և Խաղվա ագարակին շուրջը քարերու տակ, ձորերու մէջ, մացառներու տակ դիակներն կը փռեն թշուառ Կէփիկցիներուն:

Թշուառ մնացորդներն հիմա սոսկալի չքաւորութեան մէջ խոնուած են անգուռ, անփեղկ այգ մի քանի տուններու մէջ չոր գետին. կրակ չունին, ծրագնին մարեցաւ, Կանայք բոկոտն, ողորմելի՛ այն փափկասուն հարսունք և մանկամարդք կը գեգերին այս դին այն դին, օրապահիկ պատառ մը չոր հաց մուրալով. աղքատ և թշուառ հայերն ոչինչ ունին ընելու, ոչինչ ունին տալու. Թուրքերն ալ, աւերիչ և սպանիչ ձեռքերն՝ անողորմ և անգութ, դռներն կը փակեն այս թշուառաց ռաղխումին, շատ անգամ ալ ծեծելով կը հալածեն գիւղէն կամ թաղէն. ո՞վ անգթութիւն... Աստուած իմի դեռ պիտի լուսն...:

Ամպարկայ 60 տուն հայ բոլորովին մոխիր դարձուցին հոս ալ, որ Արաբկերէն '1/2 ժամ է, Արաբկերու պէս բնաջինջ եղաւ բոլոր ժողովուրդն: 75 հոգի սպանուեցան, շատ կին, հարս, աղջիկ, առեւանգեցին և սոսկալի չարակամութիւնք ի գործ դրին հոս, զորս մի առ մի թուել ալ գրիչնիս չըկնար յառաջ երթալ. աւերում, քանդում, ապականութիւն, պղծութիւն՝ ալ ի՞նչ կայ պակաս, ալ ի՞նչ կուղէք. այո՛, կրօնափոխութիւն չկայ այս վերջի երկու գիւղերուն մէջ. է՛հ, փառք Աստուծոյ....:

9 փետր. 1896 թ.



ՊԵՏՏՈՆԱԿԱՆԻ.

ՔԱՂՈՒԱՅՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնստանդնուպոլիս Ժողովրդեան երկից զիւղօրէից Գողթնեաց, Թ. 826, որով շնորհեցաւ մասն ինչ նշխարաց Խ. ՄԺԲնայ Հայրապետին ընդ մասին Նոյեան Տապանի:

— Օրհնութեան յանուն պ. Գրիգորի Մեղուինեան, Թ. 828: